

զարին մտ՝ 1497^{ին} լճի մը մէջ կռնկա-
 ձուկ մը որսացին, որ տասնուինը սօք
 երկայնութիւն ունէր ու իրէք հարիւր
 յիսուն լիտր կը կռէր. իսկ տարիքը եր-
 կու հարիւր երեսունը հինգ տարիէն ա-
 ւելի էր. ինչպէս որ ականջներուն մէ-
 ջէն ոսկեգօծ պղնձէ անցուցած օղակը
 կը վկայէր աս պղտի գրութիւնը. « Եւ
 այն առաջին ձուկն էմ, զորն որ Փրեդե-
 ըիկոս Բ կայսրը իր ձեռքովը աս լճին
 մէջ ձգեց, հոկտեմբերի 5^{ին} 1262 » :
 Երկար ատեն ասոր կանխքը Մանհէյմի
 մէջ գրուեցաւ և պատկերն ալ ինչուան
 հիմա Վաութերնի բերդին մէջ կը պա-
 հուի. որով ոչ զք կրնայ տարակուսիլ ի-
 ըն ստուգութեանը վրայ. ևս առաւել
 հինգէն ինչուան տասը սօք երկայնու-
 ունեցող կռնկաձկանց և ոչ ալ ութսու
 մեայ՝ կամ թէ քսէնք հարիւրամեայ-
 ներուն վրայ : Իսկ Պլինիոս կը յիշէ,
 թէպէտ առասպելախառն կ'երևայ՝ ին-
 չուան հազար լիտր ծանրութեամբ ու
 եօթը ութը հարիւր տարեկան կուրն-
 կաձկներ :

Թէ որ այս ձկան արտաքին տեսքն որ
 նայիս՝ չես կրնար հաւատալ թէ այս-
 չափ կատաղի գաղան մը ըլլայ : Թէ-
 պէտ գլուխը անսովոր կազմութիւն մը
 ունի ու փորը կոր, բայց մարմինը համե-
 մատ է, ու վրայի գոյներն ալ ձօխ են .
 այս գոյները՝ որոնք ընդհանրապէս մոխ-
 րագոյն, կանաչ ու դեղին են՝ երբեմն ալ
 ձերմակ, տարիքէն, սեւէն ու ջրոց այլ
 և այլ ազդեցութիւններէն կը կախուին .
 ասոնց վրայ քաղցոյն, դեղինի զարկած
 ու մթնագոյն բծեր կան, որոնք բազ-
 մաթիւ ու անկանոն են : Ի՞նչ գոյներուն
 խառնրոց աստիճաններէն՝ կռնկաձուկ
 փնտռողները կ'իմանան մին յարգը . ա-
 նոր համար սև պիսակներով դեղին մորթ
 ունեցող կռնկաձուկը ամենէն յարգին
 է, ու աւելի սուղ կը ծախուի :

Պատկերքին մէջ կռնկաձուկը 1830^{ին}
 Տամբիէր դեղին լճին մէջէն բռնուած
 է՝ չորս սօք ու բթաչափ մը երկայնու-
 թեամբ և երեսունը ինը լիտր ծանրու-
 թեամբ :

ՍԿԶԲՈՒՆԻՔ ԲՆԱՎՈՒԾՈՒԹԵԱՆ

Դաս ԺԴ. Բնաշուծական ակումբակոյտ,
 քիսակ վրայ :

Բ. Երկու մարմնոց մէկ դասն ալ՝ որ
 խիստ շատ տեսակ մարմիններ կը բա-
 վանգակէ, բայց դժբաղդուք դասական
 ընդհանուր անուն մը չունին, անոնք են
 որ սովորաբար ոչ թթուիկ են և ոչ
 թթու. ասոնք բաղկացած են, բաց ի
 թթուածնէ, ուրիշ որ և իցէ պարզ
 մարմնոց երկուքին իրարու հետ միաւո-
 բելէն. որ իրէք կերպով կրնայ ըլլալ .
 Ա. Երկու մետաղաց միաւորութենէն .
 Բ. Մէկ մետաղատիպ և մէկ մետաղ
 մարմնոց միաւորութենէն . Գ. Երկու
 մետաղատիպ մարմնոց միաւորութենէն :
 Ըստնց ալ անուանադրութիւն շատ դիւ-
 ըին է :

Ա. Երկու երկու մետաղաց միութիւնը
 սեռական կամ ընդհանուր անունով
 Ձոյլ՝ կ'ըսուի. անկէց ետև տեսակա-
 ըրար անուան տեղ կը դրուին՝ ան բաղ-
 կացութեան մէջ մտնող մետաղաց ա-
 նունները՝ քանի տեսակ որ ըլլան, գըլ-
 խաւոր կամ ամենէն շատ մասն ունեցող
 զը առաջ գնելով, զոր օրինակ Ձոյլ ա-
 նափէ և կապարի, Ձոյլ արծաթոյ, պղնձոյ
 և ոսկոյ : Ձոյլ մը իր մէջը պարունա-
 կուած մետաղաց թուոյն համեմատ
 կ'ըսուի երկապարի, եռապարի, քա-
 ռապարի, բազմապարի, որով և երկակ
 մարմնոց դասէն կ'անցնին եռակ, քառակ
 մարմնոց դասը : Իայց զիտնալու է որ
 ամէն մետաղք մէկմէկու հետ չեն կըր-
 նար ձուլուիլ կամ ձոյլ կազմել. և դեռ
 շատեր ալ կրնան ըլլալ որ մենք չենք գի-
 տեր. զոր օրինակ բուն մետաղաց թիւը
 40 հատ ըլլալով՝ երկու երկու միանա-
 լով 840 տեսակ միայն երկապարիկ
 ձոյլ կրնային կազմել, բայց մեր ինչուան
 հիմա գիտցածը 140 չհասնիր : — Մե-
 տաղաց մէջ սովորական ձոյլ կազմողներն
 են՝ պղինձն ու թութիան՝ որով կ'ըլլայ

1 Գղ. Alliage.



արոյրը , անազն ու պղինձը՝ որ կ'ըլլայ
 ըստ , կապարն ու ծարիրը՝ որով կը շի-
 նուէին տպի տառերը , ևն : Վմանապէս
 արծաթը կը ձուլուի կապարի , պղնձի
 և ոսկւոյ հետ . կազմիոնը՝ պլատինի
 հետ . երկաթը՝ պոտասիոնի , անագի ու
 պլատինի հետ . պողպատը՝ արծաթի
 հետ , և այլն : Սովորական գործածած
 ոսկի և արծաթ ստակնիս ալ մետաղաց
 ձոյլեր են , որովհետև անոնց մէջ ալ
 պղինձ կը մտնէ՝ ոսկւոյ և արծաթի կազ-
 զու թիւնը սխալացրնելու համար :

Իսկ երբ իրարու հետ միաւորած մե-
 տաղներուն մէկը մնդիկն է , ան ատեն
 ձոյլ ըսուելու տեղ՝ մասնաւոր բառով
 Մալպիոն՝ կ'ըսուի սեռական անունը , և
 առանց Սիդիկ բառը յիշելու՝ անոր հետ
 միաւորած մետաղին անունը կը դրուի՝
 իբրև տեսակարար անուն նոյն բաղիւ-
 ցու թեան . զոր օրինակ Մալպիոն ոսկւոյ ,
 Ֆալպիոն արծիւ ըսելով՝ կ'իմացուի ոսկւոյ
 կամ արծիւ մնդիկի հետ միաւորած բա-
 ղադրու թիւնը , որ ոսկէզօծողներն ու
 արծաթազօծողները կը գործածեն . Մա-
 լպիոն անագի որ հայլի շինուելու ապա-
 կիները օծելու կու գայ , և այլն :

Բ . Սէկ մետաղատիպ և մէկ մետաղ
 մարմնոյ միաւորութեանն առաջ եկած
 բաղիւցու թեան անունը տարու համար՝
 Վախ կը դրուի մետաղատիպ մարմնոյն
 անունը , որ է միշտ ելեքտրա-մերժական
 տարրը , իր ծայրը վերջադիր մասնիկս
 աւելցրնելով սոր , գղ . ure , իտ . ura . աս
 կերպով մետաղատիպ մարմնոյ անունը՝
 նոյն բաղիւցու թեան սեռական անու-
 նը կ'ըլլայ : Եւոր ետևէն իբրև տեսակ-
 արար անուն կաւելցուի՝ մետաղ մար-
 մնոյն անունը ՚ի սեռական հոլով , որ և
 կ'ըլլայ բաղիւցու թեան դրական տար-

րը . զոր օրինակ քլորին մանգանեսի հետ
 բաղիւցու թիւնը՝ որ ոչ թթու է և ոչ
 թթուիկ՝ վերի ըսած կանոնով կ'ըլլայ
 Քլորատր Ֆանգանեսի . նոյնպէս ծծմբոյ
 երկթի հետ բաղիւցու թիւնը կ'ըսուի
 Տծմբատր երկթի . իողի և կապարի բաղ-
 կացու թիւնը Իոդատր կապարի . որոնց
 մէջ առջի բառերը ելեքտրա-մերժական
 տարերքն են՝ որով և սեռական անուն ,
 իսկ վերջինները՝ ելեքտրա-դրական տա-
 րերք՝ որով և տեսակարար անուն նոյն
 բաղիւցու թեան :

Եւ ալ գիտնալու է որ ինչպէս թը-
 թուածնին համար ըսինք , ասանկ ալ
 միւս մետաղատիպ մարմնները՝ այլ և
 այլ զուգաչափերով կը միաւորին մի և
 նոյն չափ մետաղ մարմնոյն հետ , որով
 և այլ և այլ բաղիւցու թիւններ կ'ելլեն
 նորանոր յատկութիւններով . արդ աս
 աստիճաններս ալ բացատրելու համար ,
 նոյն մետաղատիպ մարմնոյն կամ սեռա-
 կան անունն սկիզբը կ'աւելցուի ան
 սկզբնատուերն , որ թթուիկներուն աս-
 տիճանները ցցուելու համար կը գործա-
 ծուին , որ են էնի , նախ , Ֆալպ , կրկն կի՝
 երկ , եռ , փեր . գղ . և իտ . sous . (sotto)
 proto , sesqui , bi կամ deuto , trito , per .
 որոնք կը ցուցնեն մետաղատիպ մար-
 մնոյն զուգաչափերը՝ համեմատութե-
 մետաղ մարմնոյ $\frac{1}{2}$, 1 , 1 $\frac{1}{2}$, 2 , 3 : —
 Վիտնալու է որ մետաղ մարմին մը չզրտ-
 նուիր որ աս ամէն այլ և այլ չափերով
 մետաղատիպ մարմնոյ մը հետ միացած
 ըլլայ , հազա անոնց մէկովը , կամ եր-
 կուքովը . բայց մենք օրինակի համար
 մետաղատիպ մարմնոյ մը աս ամէն չա-
 փերով՝ մետաղի մը հետ միացածին ա-
 նունները գնենք , իրենց տարազներովը .



1 Սո մետաղաց ձուլերուն վրայ ուրիշ ատեն
 պէտք է խօսինք , որովհետև առ ժամս խնդիրը ու-
 ըիշ բանի վրայ ըլլալով խօսքերնիս չենք կրնար
 երկնցրնել : 2 Գղ . Amalgame.

1 Գղ . Sulfure de fer .
 2 Գղ . Iodure de plomb .
 3 Գղ . Chlorure de manganèse .

Երկակ մարմինները եթէ կարճա- նեան մարտկոցին հաղորդես՝ մետաղա- տիպ մարմինը դրական բևեռին կը դի- մէ, որով յայտնի կ'ըլլայ ելեքտրա-մեր- ժական տարրը ըլլալը . իսկ մետաղ մար- մինը՝ մերժական բևեռին, իբրև ելեք- տրա-դրական տարր . անոր համար աս երկակ մարմնոց բաղկացու տարերաց մէջէն՝ մետաղատիպ մարմինը սեռական անունը կ'ըլլայ . իսկ մետաղ մարմինը տեսակարար անուն, ըստ հանրական օ- ըրինաց անուանակոչութեան :

Գ. Երկու մետաղատիպ մարմնոց միա- ւորութենէն առաջ եկած բաղկացե- լոց անուանադրութեան օրէնքը, վերին ներուն հետ նոյն է, ըստ նախադաս մասնկանց և ըստ վերջաւորութեան . և սովորական օրէնքով ելեքտրա-մերժա- կան մարմինը առաջ կը դրուի որ վեր- ջաւորութեամբ, և կ'ըլլայ բաղկացու- թեան սեռական անունը . իսկ ելեք- տրա-դրական մարմինը ետքը, և կ'ըլլայ տեսակարար անուն նոյն բաղկացու- թե- զոր օրինակ Քլորաւոր Ֆալածնի, Ծծմբա- ւոր փոսփորի, Նախածխաւոր Զրածնի, Երկ-

ածխաւոր Զրածնի, և այլն :

Իսոյց գիտնալու է որ երկու մետա- ղատիպ մարմնոց միաւորութենէն առաջ եկած գոյացութիւնը՝ երբեմն կազեղէն է, երբեմն հեղուկ, երբեմն ալ հաստա- տուն . ուստի եղան ոմանք որ աս ի- րեք վիճակս որոշելու համար, հար- կաւոր սեպեցին ասոնց անուանակոչու- թեան մէջ փոփոխութիւն մը ընել . Սու- տի կազեղէն գոյացութիւն ըլլալը իմա- ցընելու համար՝ նախ անոնց սովորա- կան անուանակոչութեան երկու տա- րերքը ետև առաջ փոխեցին, որով այն որ սեռական անուն էր՝ ըլլայ տեսակա- րար անուն, և անդրադարձեալ . և եր- կրորդ տեսակարար անուն սեպուած տա- րեր յանգը փոխեցին գղ . մէջ ը, որ հայե- ընին մէջ դրինք որեալ . Եւ բանս աւե- լի Զրածնի ուրիշ մետաղատիպ մարմնոց մը միաւորութեանը գործածուեցաւ . ո- րով Զրածնին՝ բնածխի, փոսփորի, ծը- ծմբոյ, զառկի և սելինիոնի հետ բաղ- կանալէն ելած կազեղէն մարմինները՝ փոխանակ սովորական անուանակոչու- թեամբ ըսուելու .

Ենի, Նի, Մի, Երի, Ե	Ածխաւոր Փոսփորաւոր Ծծմբաւոր Զառիւսաւոր Սելենաւոր	} Զրածնի,	Sous, Proto, Sesqui, Deuto, Trito	Carbure Phosphure Sulfure Arsénieure Sélénieure	} d' Hydrogène.
---------------------	--	-----------	-----------------------------------	---	-----------------

զարտուղութեամբ՝ մանաւանդ թէ օրինաց դէմ ըսուեցան

Կալ Զրածնի Ենի, Նի, Մի, Երի, Ե	} <table border="0"> <tr> <td>ածխաւորեալ,</td> <td rowspan="5">} Hydrogène</td> <td rowspan="5">} carburé կամ carboné.</td> </tr> <tr> <td>փոսփորաւորեալ,</td> </tr> <tr> <td>ծծմբաւորեալ,</td> </tr> <tr> <td>զառիւսաւորեալ,</td> </tr> <tr> <td>սելենաւորեալ.</td> </tr> </table>	ածխաւորեալ,	} Hydrogène	} carburé կամ carboné.	փոսփորաւորեալ,	ծծմբաւորեալ,	զառիւսաւորեալ,	սելենաւորեալ.	Sous, Proto, Sesqui, Bi, Tri	phosphoré. sulfuré. arséniqué. sélénié.
ածխաւորեալ,		} Hydrogène			} carburé կամ carboné.					
փոսփորաւորեալ,										
ծծմբաւորեալ,										
զառիւսաւորեալ,										
սելենաւորեալ.										

Զրածնին և մետաղատիպ մարմնոց մը միաւորութենէն առաջ եկած գոյա- ցութեան՝ հեղուկ վիճակը իմացընելու համար ալ՝ երկու տարեր անունը մէկ- տեղ բարդեցին ու ծայրը որ վերջացու- ցին . զոր օրինակ Զրածինը ածխոյ հետ միաւորելով, բաց երկու կազեղէն գոյա- ցութեանց՝ որ են Նախածխաւոր և Կլբ- քնածխաւոր Զրածնի, հեղուկ բաղկացու- թիւններ ալ կ'ըլլան, որոնք զարտու-

ղի անուանակոչութիւն ըսուեցան Զրած- խաւոր ¹ : — Զրածնի և մետաղատիպ մարմնոց մը հաստատուն գոյացութեանն ալ՝ սեռական անուամբ ըսին Զրաւոր ², յետոյ դնելով միւս մետաղատիպ մար- մնոյն անունը՝ իբրև տեսակարար ա- նուն . զոր օրինակ Զրածինը զառկի հետ

1 Գղ . Hydrocarbure.
2 Գղ . Hydrure.

միաւորելով՝ երկու գոյացուածիւն կ'արտադրէ , առջինը կազեղէն որ զարտուղի անուանակոչուածեամբ կ'ըսուի՝ ինչպէս որ վերը ըսինք , կազ Զբածին զառկառբեալ . երկրորդը հաստատուն՝ որ նոյնպէս զարտուղի օրինօք կ'ըսուի Զբառը զառի՝ . որոնք առաջ դրուած ճշգրտօյն անուանակոչուածեամբ պիտի ըսուին՝ առջինը Նախազառկառը Զբածին , երկրորդը Մախազառկառը Զբածին :

Ըստ վերջի կերպս , թէպէտ և մէկ անուամբ բաղկացուածեան կազեղէն , հեղուկ կի՛մ հաստատուն վիճակ ըլլալն ալ կ'իմացնէ , բայց զարտուղութի և օրինաց դէմ է ըսինք , որովհետեւ Վսխ հանրական օրինաց դէմ է՝ ելեքտրա-դրական տարրը առաջ դնել և զանիկայ սեպել բաղկացուածեան սեռական անուն . հապա պէտք է որ միշտ մերժական տարրը առաջ դրուի . իսկ արդ աս վերջի անուանակոչուածեան մէջ կը տեսնենք՝ որ Զբածինը իրեն հետ դրուած ամէն մարմնոց համեմատութեամբ ելեքտրա-դրական տարր ըլլալով՝ առաջ դրուեր է և սեռական անուն սեպուեր է . իսկ ելեքտրա-մերժական տարրքն , տեսակարար անուն . — Երկրորդ անտեղութիւն ալ աս է՝ որ մարմնոց կազեղէն , հեղուկ կի՛մ հաստատուն վիճակ ունենալը՝ իրենց բարեխառնութենէն և ճնշմանէն կը կախուի և կը փոփոխի . որով մի և նոյն բաղկացուածեան այլ և այլ անուն տալ հարկ կ'ըլլայ , իրենց գտուած վիճակին նայելով . ինչպէս որ վերը տեսանք . — Երրորդ անտեղութիւն մըն ալ ածանցից դժուարութիւնն է . վասն զի ինչպէս որ ըսինք՝ այս երկակ մարմնոց սկիզբն ալ՝ շատ անգամ հարկ կ'ըլլայ մետաղատիպ մարմնոյն չափը ցուցնող մասնիկներն աւելցնել . զոր օրինակ Նախածխառը և կըմածխառը Զբածին , որ վերջի կերպին մէջ շատ խորթ կ'իյնայ ըսելը Զբածին նախածխառըեալ , կըմածխառըեալ , որով և բառերն ալ մէկ վանկով կ'երկրնան . իսկ հոյովականներն ևս առաւել դժուար կ'ըլլան՝ — Ըստ անտեղութիւններուս պատճառաւ՝ ալ լուագոյն և ընտրելի է առջի բուն օրինօք շինուած անունները գործածելը . թէպէտ և անով մարմնոյն կազեղէն , հեղուկ և հաստատուն վիճակ ունենալը մէկ բառով չիմացուի : Բայց գիտնալու է , որ աս վերջի կերպս ալ շատ բնալոյծ կը գործածեն . ինչպէս մենք ալ անցեալ տարի լուսաւորութեան կազի վրայ խօսելու ժամանակնիս՝ , փոխանակ կըբնածխառը Զբածին ըսելու , գրինք Զբածին ածխառըեալ , կարճ ծանօթութեամբ :

Ըստ թէպէտ և ոչ թէպէտի երկակ մարմնոց անուանակոչութեան օրէնքը դրնելէն ետեւ , աս ալ գիտնալու է որ ինչպէս թէպէտիներու և թէպէտներու հաւմար ըսինք , ասանկ ալ ասոնցմէ ոմանք իրենց անունը կը փոխեն : Ըստի Վսխ կան ելեքտրա-մերժական մետաղներ , ինչպէս զառիկը , ծարիրն ու տելուրը , որ որոշեալ չափով մը միաւորելով ուրիշ ելեքտրա-դրական մետաղաց հետ , ըստ կանոնի իոյ ըսուելուն տեղը , մետաղատիպ մարմնոց բաղկացուածեան պէս վերջաւորութիւն կ'ունենան առ . զոր օրինակ փոխանակ ըսուելու Զոյլ պղնձի և զառիկի , Զոյլ պղնձի և ծարիրի , Զոյլ կապարի և տելուրի , կ'ըսուին Զառկառը կամ Ծարրառը պղնձի՝ , Տելուրառը կապարի՝ : — Ըստ պատճառն ան է՝ որ զառիկը , ծարիրն ու տելուրը մետաղ կամ մետաղատիպ ըլլալու որոշ յատկութիւնները չունին .

1 Իտալերէն լեզուի մէջ աս բանս ուրիշ անտեղութիւն մ'ալ ունի , որ գգ . é մասնիկին տեղ ատ վերջ սեպականած է . իսկ արդ նոյն ատ վերջ կը գրուի նաև գգ . ale վերջացած աղերուն . որով մեծ շփոթութիւն ալ կրնայ պատճառել . մասնաւոր գիտութեան և լեզուին քիչ հմտութիւն ունեցողին . աս բանիս համար թարգմանութեան ասեմն ալ շատ զգուշութիւն ընելու է . զոր օրինակ կըբնածխառը Զբածին կ'ըսուի Idrogene bicarbonato , կըմածխառը գորտին ալ որ ազ է , նոյնպէս կ'ըսուի Bicarbonato di potassa .

2 Տես Գաս Գ . հտ յ . 188 .
 3 Գ . Գ . Arsénium կամ Antimoniure de cuivre .
 4 Գ . Գ . Tellure de plomb .

1 Գ . Գ . Hydrure d'arsenic, որուն Ռէնէոյ բնալոյծը Զառկառը Զբածին Arsénium d'hydrogène կ'ըսէ , որ աւելի ընտրելի է .
 2 Տես ասոնց ելեքտրութեան կարգը իրենց ցուցակին մէջ , էրեն 94 .

անոր համար բնալուծից ոմանք մետաղաց մէջ կը սեպեն զանոնք, իսկ այլք մետաղատիպ՝ :

Արհրորդ՝ մէկ մետաղատիպ և մէկ մետաղ տարերացմէ բաղկացեալ երկակ մարմինները՝ ուսմիօրէն մասնաւոր անուն ունին. զոր օրինակ՝ (Նոմաւոր սընդիկին կ'ըսուի կիւսֆարիս, Նոմաւոր զառկին՝ (կարմիրը) մեր բժշկարանաց մէջ կ'ըսուի Էմպէի՝, (դեղինը) զառփնա, Վլորաւոր սողիւնին կիւսիւրոյ աղ. ևն :

Արրորդ՝ երկու մետաղատիպ մերժալիսն և պրահան մարմիններ, զոր օրինակ մահածինն ու ջրածինը մէկտեղ միանալով, փոխանակ իրենց անուանակոչութեան համեմատ Մահածնաւոր կամ Ֆորակաւոր ջրածնի ըսուելու, իր հին անունը պահեր է և ըսուեր է Աւշակ, որ թթուիկներուն կիմ ազաշէն արմատոց կարգը կը սեպուի, որովհետև թթուներու հետ միանալով աղեր կը ձևանայ :

Մանապէս մահածնի և բնածխոյ միաւորութենէն բաղկացութի մը կ'ըլլայ՝ որ փոխանակ Մահածնաւոր բնածխի ըսուելու, մասնաւոր բառով ճառածին՝ կ'ըսուի, որովհետև երկթի հետ միանալով՝ կապոյր Պրոսիոյ՝ ըսուածներկը կը ձևանայ : Այս բաղկացեալ մարմինս ալ շատ անգամ պարզ մարմնոյ

1 Ռէննոյ՝ զառկին ու տեղուրը մետաղատիպ կը գնէ, ծարիրը մետաղ : իսկ Տիւմա՝ ջրածինը մետաղաց կարգը կը գնէ, որ աւելի զարմանալի է և մեկնութիւնն ալ կու տայ :

2 Պէսք չէ չփոթել աւ բառս Զարաիի հետ որ է ըս. Sandaracca ըսուած խէժը :

3 Գ.Ղ. Cyanogène որ յն. կապոյր աբապուրը կը նըշանակէ, ինչպէս նաև հ.յ. նմանաձայն գործածած բառը՝ որ ծառի բառէն առաջ կու գայ, որ կապոյր ըսել է. թէպէտ և Շուլաւմենն առաջ եկած գոյնը մութ կապոյտ է, և ոչ ծաւի՝ որ է բաց կապոյտ կամ երկնագոյն. բայց մենք իրիւ յատուկ և քիչ գործածուած բառ ըլլալուն՝ ասոր սեպհակամած ենք. ձայնով ալ քիչ շատ նման ըլլալուն և անոնցներու ալ գիւրաւ յարմարելուն :

4 Գ.Ղ. Bleu de Prusse, որ ներկագործութեան և պատկերչանութեան մէջ կը գործածուի. այսպէս կոչուելուն պատճառը գլխաւորապէս Բրուսիոյ մէջ շինուելուն համար է. սոյն պատճառիս համար է որ ծաւածնէ ու ջրածնէ բաղկացած թթուն ալ Շաւալբային ըսուելու տեղ շատ անգամ Պրոսային Լիւու կ'ըսուի :

պէս կը ներգործէ՝ ուրիշ տարերաց հետ միանալով. զոր օրինակ թթուածնի և ջրածնի հետ միաւորելով՝ զօրաւոր թթութուններ կ'ըլլայ. ուստի ինքն ալ պարզ տարերաց պէս մասնաւոր համառօտագրութիւն ունի և կը գրուի ծա որ է = Մ՝ Աժ՝. իրեն թթուներն ալ կ'ըսուին ճաւային՝ ու ճաւալբային՝ : Նաւաւծնին ուրիշ մետաղատիպ և մետաղաց հետ բաղկացութիւններն ալ կ'ըսուի ճաւային՝, որոնք քլորաւորաց և ծծմբաւորաց կարգը կը սեպուին : Նաւային թթութուով և արմատ մարմնով մը աղեր ալ կը ձևանան՝ որոնք սեռական անուամբ կ'ըսուին ճաւային՝ :

Ինչուան հիմա գրուցած՝ երկու մետաղատիպ մարմիններէ ձևացած գոյացութիւններն՝ ընդհանրապէս ոչ թթու են և ոչ թթուիկ. բայց աս երկակ մարմիններէն կան ոմանք՝ որ ելեքտրա-մերժական են, որով և թթու են. ինչպէս որ վերը ըսինք Սրաթթուոց, Վլորաթթուոց և Նոմաթթուոց համար : Մանք ալ ելեքտրա-դրական են, և թթուիկներու կամ արմատներու կարգ են, և Քլորաբճապ՝ և Ծծմբաբճապ՝ կ'ըսուին. և ասոնք Վլորաթթուոց ու Նոմաթթուոց հետ միաւորելով՝ աղեր կը ձևանան որ Քլորաղ՝ և Ծծմբաղ՝ կ'ըսուին. ասոնք ինչպէս իրենց յատուկութեամբը, այսպէս ալ իրենց անուանակոչութեամբ թթուածնով ձևացած թթուներուն, թթուիկներուն և աղերուն բոլորովին նման են :

Այսչափով կը կնքենք երկակ մարմնոց անուանակոչութեան օրէնքը. գալ յօդուածով ալ կը խօսինք եռակ ու քառակ մարմնոց վրայ :

- 1 Գ.Ղ. Acide cyanique.
- 2 Գ.Ղ. Acide cyanhydrique.
- 3 Գ.Ղ. Cyanure.
- 4 Գ.Ղ. Cyanate.
- 5 Գ.Ղ. Chlorobase.
- 6 Գ.Ղ. Sulfobase.
- 7 Գ.Ղ. Chlorosel.
- 8 Գ.Ղ. Sulfosel.